ՇԱՌԼ ԴԸ ԳՈԼԻ ԱԼԺԻՐՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ժ. Հ.

Շառլ դը Գոլի վարած արտաքին քաղաքականության մեջ առանձնանում են հետևյալ ուղղությունները. գաղութային (առաջին հերթին Ալժիրի ճգնաժամի կարգավորումը), հյուսիսատլանտյան (հարաբերությունները ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ), եվրոպական (հարաբերությունները ԳՖՀ-ի և ԱՊԵՀ-ի հետ) և հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Այս ուղղություններից առավել ջանքեր էր պահանջում Ալժիրում ստեղծված իրավիճակի շտկումը, քանի որ ընթացող պատերազմն օր օրի վատթարացնում էր ֆրանսիացիների դրությունն այդ երկրում, խփում Ֆրանսիայի միջազգային վարկանիշին և տնտեսական բեռ դառնում Ֆրանսիայի տնտեսության համար: Անձամբ Շառլ դը Գոլը կողմ էր Ալժիրին անկախություն տալու գաղափարին և համոզված էր, որ Ֆրանսիան այլևս չի կարող շարունակել նախկին քաղաքականությունը և անիմաստ էր համարում Ալժիրը ուժով պահել ֆրանսիական իշխանության ներքո: Սակայն կառավարության ոչ բոլոր անդամներն էին համամիտ դրան: Ալժիրի հարցը ֆրանսիական կառավարությունը բաժանել էր երկու գաղափարական ճամբարի. մի մասը կողմ էր գաղութային քաղաքականության շարունակման ու պատերազմը մինչև հաղթանակ տանելուն (մասնավորապես աջ ծայրահեղականները)[1], իսկ ըստ մյուս մասի՝ ստեղծված իրավիճակը չէր բխում երկու ժողովուրդների շահերից, և անհրաժեշտ էր անկախություն տալ Ալժիրին[2]: Մինչ Փարիզը կկողմնորոշվեր Ալժիրի նկատմամբ քաղաքականության հարցում, 1958 թ. մայիսին Ալժիրում ստեղծվեց «Հանրային անվտանգության կոմիտե»՝ կոչ անելով հրա-ժարվել Փարիզին ենթարկվելուց: Որպես դրա հետևանք՝ 1958 թ. մայիսի 31-ին Պիեռ Պֆիմլենի կաբինետն ընկավ. նոր վարչապետ նշանակվեց Շառլ դը Գոլը[3]:*

---

* *Ածխի և պողպատի եվրոպական համայնք՝ ստեղծված 1952 թ., որի հիմքի վրա հետագայում ձևավորվել է ԵՄ-Ն:*

[1] *Տե՛ս История международных отношений (1918-2003), т. третий. События 1945-2003 /Раздел второй. балансирование на грани войны, глава 5. Противоречия «конкурентного сосуществования» (1956–1958), http://www.diphis.ru*

[2] *Տե՛ս* Арзаканян М. *"Де Голль и реформа государственного устройства Франции" [Электронный ресурс] - http://www.strana-oz.ru/?numid=178 article=837*

[3] *Տե՛ս История международных отношений (1918-2003), т. третий... http://www.diphis.ru*

Մայիսի 13-ին ալժիրյան իրադարձությունների հետևանքով Ֆրանսիան կանգնել էր քաղաքացիական պատերազմի շեմին: Այն հանգեցրեց Չորրորդ հանրապետության անկման: Իշխանության եկած Շառլ դը Գոլը որպես քաղաքական առաջնահերթություն, իր առջև դրեց Ալժիրյան պատերազմի հարցը: Վերջինս անմիջապես իրադրությունը վերցրեց վերահսկողության ներքո և բոլորովին էլ մտադիր չէր անհապաղ գնալ զիջումների ապստամբների հետ, բայց նպատակ էր հետապնդում վերակարգավորել Ֆրանսիայի հարաբերություններն իր գաղութների հետ: 1958 թ. սեպտեմբերին Ֆրանսիայում ընդունվեց նոր սահմանադրություն: Դրանով նախ-կին Ֆրանսիական միությունը վերափոխվեց Ֆրանսիական համայնքի. դա քաղաքական մարմին էր, որի մեջ էին Ֆրանսիան և իր գաղութները՝ որպես «ինքնավար» պետություններ: Շատ գաղութներ, բացառությամբ Գվինեայի (որը ձգտում էր խաղաղ ճանապարհով հասնել անկախության), համաձայնեցին դը Գոլի պլանին: Սակայն ալժիրցիները չընդունեցին այդ պայմանները[4]: ԱՊԵՀ-ը թերահավատորեն էր նայում Ֆրանսիայի հանձնառությանը՝ լուծելու ալժիրյան խնդիրը, և դեմ էր ամեն տեսակ իրավական ընդարձակումներին: Ըստ նրա՝ Շառլ դը Գոլը դեռ հստակ չի կողմնորոշվել Ալժիրի ճակատագրի հարցում, փորձում է այնտեղ պահել ֆրանսիական լեզուն ու մշակույթը, և իր այցն էլ Ալժիր, որը տեղի ունեցավ հունիսի 4-7-ը, ԱՊԵՀ-ն ընկալեց որպես «Ֆրանսիական Ալժիրի» օգտին արված քայլ: Ալժիրում հունիսի 4-ին Շառլ դը Գոլը հստակ խոսեց ինքնորոշման իրավունքի մասին[5]: Ելույթ ունենալով մեծ հանրության առջև՝ դը Գոլն ասաց. «Ես գիտեմ՝ ինչ է այստեղ տեղի ունեցել: Ես գիտեմ՝ ինչ էիք ուզում անել: Ես տեսնում եմ, որ այն ճանապարհը, որ բացվել է Ալժիրում, ճանապարհ է դեպի եղբայրություն: Ես հայտարարում եմ, որ Ալժիրում ապրում է միևնույն իրավունքներով և պարտականություններով օժտված ժողովուրդ»[6]: Իրականում Շառլ դը Գոլը իր առջև երեք նպատակ ուներ.

1. Համոզել Եվրոպային և խուսափել բողոքի ակցիայից, որը կարող էր միայն խորացնել Ալժիրի ճգնաժամը:

2. Հարգել մուսուլման ժողովրդին, պատերազմի ընթացքում հարգել նրա իրավունքները:

---

[4] *Նույն տեղում (http://www.diphis.ru):*

[5] *Տե՛ս* Де Голль Ш. *Мемуары надежд, М., 2000.*

[6] *Նույն տեղում:*

3. Պահպանել օրինականություն[7]:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ դը Գոլի ալժիրյան քաղաքականությունը էապես տարբերվում էր իր նախորդների վարած քաղաքականությունից: Դը Գոլը նպատակ չուներ փրկել Ֆրանսիան ալժիրյան ճահճից: Նա ջանում էր անել այն, ինչ նրանից ակնկալում էր թե՛ Ֆրանսիան, թե՛ Ալժիրի ֆրանսիական վարչակարգը՝ պահպանել ֆրանսիական Ալժիրը[8]: 1958 թ. հունիսի 4-ին Ալժիրում բազմության առջև դը Գոլի «Ես Ձեզ հասկանում եմ» արտահայտությունը պատմական լայն քննարկումների տեղիք տվեց: Նա իր կառավարման 18 ամիսների ընթացքում չընդունեց ոչ մի պարտավորություն Ալժիրի անկախության ճանաչման նկատմամբ:

1958 թ. հունիսի 27-ին Մատինյոնում առաջին անգամ հեռուստատեսային ելույթի ժամանակ Շառլ դը Գոլն անդրադարձավ ա-ժիրյան խնդրին՝ վերականգնել Ֆրանսիայի տնտեսական և ֆինանսական հավասարակշռությունը Ալժիրում և իրականացնել սահմանադրական բարեփոխումներ[9]: 1958 թ. հուլիսի 31-ին այն հեռարձակվեց Ալժիրում: 1958 թ. հուլիսին Ալժիր կատարած այցի ժամանակ, որն իր իշխանության գալուց հետո առաջինն էր, Շառլ դը Գոլը խոստացավ մոտակա ամիսներին սոցիալ-տնտեսական հարցերի լուծում[10][11]: Իսկ երկրորդ այցի ընթացքում Արևելյան Ալժիրի մայրաքաղաք Կոնստանտինում Շառլ դը Գոլը հրապարակեց Ալժիրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը՝

---

[7] Տե՛ս **Discours du 4 juin 1958 au Forum d'Alger**, *Type de média:Vidéo, Date de diffusion 04 juin 1958, Type de parole: Voyage en outre-mer, Allocutions et Discours, Thèmes:Colonisation et décolonisation > Guerre d'Algérie:*

[8] **Wall I. M.** *France, the United States and the Algerian War. Berkeley, Los Angeles and London, 2001, pg 335, ISBN 978-0-520-22534-3 Reviewed by William D. Irvine* (*Department of History, York University, Toronto, Canada, Published on H-Diplo (May, 2002).*

[9] *Տե՛ս Allocution radio-télévisée du 27 juin 1958, prononcée à l'Hôtel Matignon, Type de média:VidéoDate de diffusion:27 juin 1958, Type de parole:Allocutions et Discours, Thèmes:Colonisation et décolonisation > Guerre d'Algérie:*

[10] **Berstein S.** *Allocution radio-télévisée du 27 juin 1958, Éclairage.*

[11] *Տե՛ս* **Allocution radio-télévisée du 3 juillet 1958 prononcée à Alger**, *Type de média :Vidéo,Date de diffusion :04 juillet 1958, Date d'événement 03 juillet 1958, Type de parole :Voyage en outre-mer, Allocutions et Discours, Conditions de tournage Intérieur - Aucun public visible - Tenue militaire, Thèmes:Colonisation et décolonisation > Guerre d'Algérie > Population > Musulmans:*

ուղղված մոտակա հինգ տարում մուսուլմանների և եվրոպացիների միջև անհավասարությունների կրճատմանը[12]:

Ըստ Շառլ դը Գոլի՝ ալժիրյան հակամարտությանը կարելի էր վերջ դնել քվեարկությամբ՝ նկատի ունենալով սեպտեմբերի 28-ի բարեփոխումները և 1958 թ. նոյեմբերի 23-30-ի ընտրությունները, ինչպես նաև ռազմական գործողությունները դադարեցնելով, որի հետևանքով խնդիրը կթևակոխեր լուծման իրավական դաշտ: Ինչ վերաբերում է Ալժիրի ապագային, ապա դը Գոլն այն տեսնում էր Միության կազմում: Հաշվի առնելով, որ Ալժիրում ծավալվող իրադարձությունները ցույց տվեցին ռազմական ճանապարհի վտանգները Ֆրանսիայի համար, Շառլ դը Գոլը կատարեց վճռական քայլ, որն անուղղակիորեն նշանակում էր հրաժարում ինտեգրացիայից: Նա երկակի քաղաքականություն էր վարում, որն ուղղված էր պահպանելու ֆրանսիական Ալժիրը և հրատապորեն հասնել ռազմական հաշտեցման և, իհարկե, սոցիալ-տնտեսական զարգացման, որը Կոնստանտինի հնգամյա ծրագրի հիմքում էր: Ստեղծված իրավիճակում ալժիրցիները պահանջեցին քաղաքական հստակեցում, և իրավիճակից դուրս գալու համար Շառլ դը Գոլին ոչինչ չէր մնում, քան ընդունել պատմական նշանակության որոշում՝ հնարավորություն տալ ալժիրցիներին որոշելու իրենց ապագան՝ ընձեռելով երեք հնարավոր տարբերակ.

1. *մեկուսացում-սեցեսիա (Ֆրանսիայի հետ կապերի խզում).*
2. *ֆրանսիականացում-գալիզացիա (ամբողջական ինտեգրացում).*
3. *համագործակցություն-ասոցիացիա (պահպանելով ինքնուրույնությունը՝ ստանալով աջակցություն Ֆրանսիայից)[13]:*

Ալժիրում 1959 թվականին գործի դրվեց այսպես կոչված «Շելի ծրագիրը»: Նպատակներն էին՝ խարխլել ազգային-ազատագրական բանակի հիմքերը և քանդել Ալժիրի ազգային-ազատական ճակատը[14]: 1959 թ. փետրվարից մինչև 1961

---

[12] *Տե՛ս* ***Discours du plan de Constantine, le 3 octobre 1958,*** *Type de média :Vidéo, Date de diffusion: 04 octobre 1958, Date d'événement :03 octobre 1958, Politique intérieure > Economie > Vie économique > Plan quinquennal, Lieux: Afrique> Algérie > Constantine:*

[13] *Տե՛ս Allocution radio-télévisée prononcée au palais de l'Elysée le 16 septembre 1959, Type de média: Vidéo, Date de diffusion:16 septembre 1959, Type de parole : Allocutions et Discours, Thèmes: Colonisation et décolonisation >Communauté Française, Colonisation et décolonisation > Droit des peuples à disposer d'eux-mêmes, Colonisation et décolonisation > Guerre d'Algérie > Développement de l'Algérie > Plan de Constantine:*

[14] *Ազգային-ազատական ճակատը ստեղծվել էր 1954 թ. և նպատակ ուներ հասնելու Ալժիրի անկախության, http://www.history.com/this-day-in-history/french-algerian-truce*

թվականը Շելն իրականացրեց իր ծրագիրը, որը, փաստորեն, հետապնդում էր Ալժիրի ռազմական վերանվաճման քաղաքականություն: Այն միլիոնավոր մահմեդականների տեղահանեց իրենց գյուղերից՝ ստեղծելով «ազատ կրակի գոտիներ» և ավելացնելով Ալժիրի ապստամբների և զոհերի թիվը: Շելի ծրագիրն անկախ Ալժիրի տեսլականի հետ անհամատեղելի էր[15]: Միայն համոզվելով, որ Շելի նպատակները չիրականացան և չկարողացան կոտրել Ալժիրի Ազգային-ազատական ճակատի վճռականությունը՝ դը Գոլն անցավ ֆրանսիական Ալժիրի պահպանման քաղաքականությանը՝ գիտակցելով, որ միայն ռազմական գործողությունների դադարեցմամբ Ալժիրում խաղաղություն չի հաստատվի, և անհրաժեշտ է խնդրի խորքային լուծում: Անգամ Կոնստանտինի հնգամյա տնտեսական բարեփոխումների ծրագիրը բավարար չէր: Ուստի 1959 թ. սեպտեմբերի 16-ին իր ելույթում ալժիրցիներին առաջարկվեց վերոնշյալ երեք տարբերակը՝ սեցեսիա*, գալիզացիա, ասոցիացիա[16]: Դը Գոլը նշեց. «Նրանք, ովքեր ալժիրցիների ինքնորոշման իրավունքը տանում են հեղաշրջման ճանապարհով, խնդրեմ, բոլոր հնարավորությունները բաց են, եթե ապստամբները վախենում են, որ նրանք, վերջ դնելով զինված պայքարին, կհանձնվեն արդարադատությանը, ապա նրանք կքննարկեն իշխանությունների հետ իրենց ազատման պայմանները, որոնք ես առաջարկեցի»[17]: Այս ելույթը կարելի է համարել Ալժիրի քաղաքական պայքարի կարևոր իրադարձություններից մեկը[18]: Այն առաջացրեց եվրոպացիների անհանգստությունը, Ֆրանսիայում ակտիվիստների և բանակի դժգոհությունը, որոնք դը Գոլից իրենց խաբված էին համարում: Իսկ արդեն 1959 թ. սեպտեմբերի 28-ին Ալժիրի ժամանակավոր կառավարությունը պատասխանեց դը Գոլի ելույթին՝ առաջարկելով բանակցություններ Ֆրանսիայի կառավարության հետ՝ պահանջելով պայմաններ և երաշխիքներ ինքնորոշման իրավունքի իրականացման համար[19]: 1960 թ. հունվարին Կոմիտեի նախկին նա-

---

[15] Տե՛ս **Irwin M. Wall.**, նշվ. աշխ.; France, the United States and the Algerian War. Berkeley, Los Angeles and London: University of California Press, 2001, pg. 337, ISBN 978- 0-520-22534-3 Reviewed by William D. Irvine (Department of History, York University, Toronto, Canada) Published on H-Diplo (May, 2002):

* Սեցեսիա-ֆր. Secession- պետության կազմից նրա որևէ մասի դուրս գալը՝ անկախ պետություն կազմելու նպատակով:

[16] Տե՛ս **Discours du 29 janvier 1960**, Type de média:Vidéo, Date de diffusion: 29 janvier 1960, Type de parole: Allocutions et Discours, Lieux: Afrique>Algérie > Alger:

[17] Տե՛ս **Stora B.** Le mystere De Gaulle: Son Choix Poux l'Algerie (The Mystery De Gaulle: His Choice for Algeria) (Robert Laffont: 2009, 267 pages: ISBN 13: 97822 21110768-ISBN10:2221110765, p. 241:

[18] Նույն տեղում, էջ 183:

[19] Նույն տեղում, էջ 247:

խագահ, ալժիրյան բանակի կորպուսի հրամանատար գեներալ Մասուն գերմանական թերթում հրապարակված իր հարցազրույցում քննադատեց պետության ղեկավարի քաղաքականությունը: Վերջինս անմիջապես հրավիրվեց Փարիզ և ազատվեց պաշտոնից: Սրան հաջորդեց հունվարի 24-ի ակտիվիստների բողոքի ակցիան, որը, լայն թափ ստանալով, հանգեցրեց ոստիկանության հետ բախումների[20]:

Ինքնորոշման առաջարկը չդադարեցրեց ալժիրյան պատերազմը: Ճգնաժամից դուրս գալու համար Շառլ դը Գոլը պարտավոր էր հանդես գալ նոր նախաձեռնությամբ: Ըստ նրա՝ ալժիրյան հարցը ապագաղութացման քաղաքականության մի մասն է միայն, որը դեռ անհանգստացնում է ֆրանսիացիներին[21]: Այս ամենին Շառլ դը Գոլն անդրադարձավ 1960 թ. սեպտեմբերի 5-ի մամուլի ասուլիսի ժամանակ, քաջ գիտակցելով, որ չի խուսափի կոմունիստական երկրների և երրորդ աշխարհի երկրների հարցադրումներից: Անդրադառնալով Սև Աֆրիկային՝ նշեց նախկին գաղութների ինքնորոշման անհրաժեշտության մասին՝ կարևորելով այդ երկրների և Ֆրանսիայի համագործակցությունը[22], իսկ Ալժիրի հիմնահարցի վերաբերյալ հայտարարեց, որ Ալժիրի ճակատագիրը կորոշեն ալժիրցիները:

1959 թ. սեպտեմբերի ելույթից մեկ տարի անց ալժիրյան ինքնորոշման հարցը դեռ մնում էր հետնաբեմում: 1960 թ. հունիսին մղվող բանակցությունները փակուղի էին մտել: Դը Գոլը ցանկանում էր նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և քայլ անել: Սկզբում նա հայտարարում էր, որ կստեղծվի Ալժիրի Հանրապետություն՝ իր կառավարությամբ, օրենքներով և ինստիտուտներով, իսկ դրան հասնելու համար պետք էր կա՛մ գործի դնել կառավարական հեղինակությունը, կա՛մ զենքը: Այս ելույթը կարծես սկիզբ էր ծրագրված գործընթացին, որը թույլ կտար Ալժիրին իրականացնելու ինքնորոշման իր իրավունքը: 1961 թ. հունվարի 8-ին ծրագրվում էր անցկացնել ինքնորոշման քաղաքականության հաստատման հանրաքվե: Դը Գոլի այս քաղաքականությունը հանգեցնում էր Եվրոպայի հակակրանքին և մուսուլմանների դեմ ցույցերի:

1961 թ. ապրիլի 22-ին Ալժիրում ռազմական հեղաշրջում եղավ: Չորս բարձրաստիճան գեներալներ, այդ թվում Ալժիրի բանակի երկու նախկին

---

[20] *Տե՛ս* **Berstein S.** *La semaine des barricades à Alger, http://fresques.ina.fr*

[21] *Նույն տեղում:*

[22] *Տե՛ս* ***Conférence de presse du 5 septembre 1960****, Type de média :Vidéo, Date de diffusion:05 septembre 1960, Type de parole:Conférence de presse, Thèmes: Colonisation et décolonisation > Droit des peuples à disposer d'eux-mêmes, Empire français > Colonie, Guerre d'Algérie > Cessez-le-feu, Guerre d'Algérie > Développement de l'Algérie, Guerre d'Algérie > Statut de l'Algérie >autodétermination:*

հրամանատարներ, ցամաքային զորքերի շտաբի նախկին պետը և օդուժի հրամանատարը օտարերկրյա լեգեոնի հովանավորության ներքո գրավեցին իշխանությունը: Այն պետք է կանխեր ինքնորոշման քաղաքականության իրականացումը: Դը Գոլը սահմանադրության 16-րդ հոդվածով իրեն տրված արտակարգ լիազորություններով ապրիլի 23-ի իր ելույթում դատապարտեց ռազմական հեղաշրջումը[23]:

Ալժիրի հետ բանակցություններն այս պայմաններում արդեն պետք է վարվեին ժամանակավոր կառավարության հետ: 1961 թվականին Էվիանում տեղի ունեցան առաջին բանակցությունները, որտեղ դը Գոլը ներկայացրել էր Ալժիրի ինքնորոշման հարցը: 1961 թ. մեծ մասն անցավ բանակցությունների մեջ: Դժվարություններն ակնհայտ էին, և անհրաժեշտ էր տեղի տալ զիջումների: 1960 թ. սեպտեմբերի 5-ի մամլո ասուլիսում բարձրացվեց Ալժիրի պետության ստեղծման հարցը, որը դը Գոլը մտադիր էր հանձնել ժամանակավոր կառավարությանը: Ըստ նրա՝ միայն ընտրությունների միջոցով է հնարավոր ստեղծել օրինական կառավարություն: Հաջորդ հարցը Սահարայի հարցն էր. դը Գոլը համաձայն էր տեսնել այն Ալժիրի իշխանության ներքո, պայմանով, որ Ֆրանսիան վերահսկի գազն ու նավթը[24]: Այսպես քայլ առ քայլ զիջումներ անելով՝ առաջարկում էր Ալժիրին ինքնուրույն ընտրել իր ապագան:

1961 թ. մայիս–հուլիս ամիսներին ընթացան ժնևյան բանակցությունները. պայմաններից մեկը ռազմական գործողությունները դադարեցնելն էր: Եվ արդեն 1962 թ. մարտի 18-ին Ալժիրում հայտարարվեց հրադադար: Այս ամենը, ըստ դը Գոլի, կհանգեցներ ալժիրցիների ինքնորոշման իրավունքի իրականացման, Ֆրանսիա–Ալժիր համագործակցության և եղբայրական հարաբերությունների հաստատման:

Ֆրանսիական երեք նախարարների (Լուի Ժոկա, Ռոբերտ Բուրոն, Ժան դը Բրոյլա) և Ալժիրի ժամանակավոր կառավարության միջև բանակցություններից հետո (Էը Ռուսես, 1962 թ. փետրվարի 12-18) մարտի 17-ին Էվիանում սկիզբ դրվեց պաշտոնական բանակցությունների: Այն ավարտվեց մարտի 18-ին «Կրակի դադա-

---

[23] *Տե՛ս* ***Discours du 23 avril 1961****, Type de média :Vidéo, Date de diffusion:23 avril 1961, Type de parole : Allocutions et Discours:*

[24] *Տե՛ս* ***Conférence de presse du 5 septembre 1960,*** *Type de média : Vidéo, Date de diffusion:05 septembre 1960, Type de parole: Conférence de presse, Thèmes: Colonisation et décolonisation > Droit des peuples à disposer d'eux-mêmes:*

րեցման» համաձայնագրով, որն ուժի մեջ մտավ մարտի 19-ին[25]: Սեղանին դրված էր երեք հարց՝ Ալժիրի անկախություն, ֆրանս-ալժիրյան համագործակցություն, երկու ժողովուրդների միջև կապի պահպանում: Ալժիրյան պատերազմի ավարտը և Էվիանի համաձայնագիրը Հինգերորդ հանրապետության կարևոր քայլերից է[26]: Այս համաձայնագրով, որը կնքվեց Ֆրանսիայի և Ալժիրի Ազգային-ազատական ճակատի միջև, ավարտվեց Ալժիրի 7-ամյա պատերազմը՝ ազդարարելով Ալժիրում Ֆրանսիայի 130 տարվա գաղութային քաղաքականության ավարտը: Ալժիրը անկախություն ստացավ[27], և 1962 թ. ապրիլի 8-ի հանրաքվեից հետո Ֆրանսիան պաշտոնապես ճանաչեց Ալժիրի անկախությունը: Ստեղծվեց «օդային կամուրջ» Ֆրանսիայի քաղաքացիներին Ալժիրից տեղափոխելու համար: Էվիանի համաձայնագրով անկախություն ստանալուց հետո Ալժիրը պարտավորվեց իր տարածքում պահել ֆրանսիական երեք ռազմական բազա և հարգել եվրոպացիների իրավունքները[28]: Ֆրանսիայի սահմանադրության մեջ առանձին մաս հատկացվեց Ֆրանսիայի գաղութների կարգավիճակի հարցին:

Այսպիսով՝ Շառլ դը Գոլի ալժիրյան քաղաքականության շնորհիվ երկիրն ի վերջո դուրս եկավ արյունոտ ճգնաժամից, իսկ Ալժիրն էլ իր պայքարի շնորհիվ նվաճեց անկախություն: Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլը պետական մեծ գործչին հատուկ խորաթափանցությամբ հասկացել էր, որ Ալժիրը պահել այլևս անհնար է, իսկ արնահեղությունը շարունակելը կհանգեցնի ոչ միայն նորանոր չարդարացված զոհերի, այլև նման քաղաքականության շարունակման պարագայում ուղղակիորեն վտանգված կլինի արդեն Ֆրանսիայի ապագան: Բայց ժողովուրդը, որն ընկալում էր գեներալ դը Գոլին որպես մեծ հայրենասերի խարիզմա-տիկ կերպարի, և դրա համար ուներ բոլոր հիմքերը, այս անգամ չընկալեց նրան: Շառլ դը Գոլը դիմեց խիստ ծայրահեղ, բայց հիրավի խորիմաստ քայլի: Նա համապետական հանրաքվեի դրեց ժողովրդի կողմից իրեն վստա-հություն հայտնելու հարցը: Հանրաքվեն հաստատեց ժողովրդի վստահությունը դը Գոլի հանդեպ:

---

[25] *Տե՛ս* **Berstein S.** *Déclaration du 18 mars 1962 (cessez-le-feu en Algérie), Éclairage, http://fresques.ina.fr*

[26] *Տե՛ս* **Арзаканян М. Ц.** *Де Голль и голлисты, М., 1990, с. 164.*

[27] *Տե՛ս* **Де Голль Ш.** *Военные мемуары, М., 2003.*

[28] *История международных отношений (1918-2003), Глава 6. Смещение конфликтности в зону международной периферии (1959-1962)/ Урегулирование конфликта в Алжире (март 1962), http://www.diphis.ru*

РЕЗУЛЬТАТ АЛЖИРСКОЙ ПОЛИТИКИ ШАРЛЯ ДЕ ГОЛЛЯ

АРУТЮНЯН Ж. А.

Резюме

Алжирская концепция де Голля была разработана задолго до того, как он стал президентом в 1958 году. 16 сентября 1959 года де Голлем были предложены три возможных решения алжирского кризиса: а) отделение, которое повлекло бы за собой разделение страны; б) превращение Алжира в территорию Франции в) независимость, в той или иной форме предполагающая ассоциацию с Францией. Де Голль принял решение дать Алжиру возможность самоопределения. Данное решение привело к восстаниям французских колонистов в Алжире, выступавших против независимости. Наконец, в 1962 году была достигнута договоренность, и Алжир стал независимым.

THE RESULT OF CHARLES DE GAULLE'S ALGERIAN POLICY

ZH. HARUTYUNYAN

Abstract

The policy on Algeria was one of the most marking elements of leadership of France's president Charles De Gaulle (1958-1969). De Gaulle conception of Algeria's future was developed well before he was called upon to lead the country in 1958. On September 16, 1959 the General offered three possible solutions to the Algerian crisis: a) secession, which would entail dividing the country; b) turning Algeria into a totally French territory through the elevation of the Algerians to the level of citizens; and c) independence with some form of association with France. De Gaulle decided to allow Algeria self-determination. This decision led to several revolts in Algeria by French colonists who opposed independence. Finally in 1962 an agreement was reached that provided for Algerian independence.